



«ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԸ ՏՂՈՅՆ ՈՐ ԻՆՈՒ ԳԱՆ» : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . ԴԵԿՏԵՄԲԵՐ 4 . 1874 .

ԹԻՒ 12



րին մէջ վարժապետը դպրոցին դուռը կայնած տղարը կը դիտէ. Յարձակողները, ներսիններն անհոգ կարծելով, կու գան մարտիոցին վրայ. բայց ներսինները պաշարողներուն վրայ ձիւնէ գնդակներու սաստիկ անձրև մը տեղալով զանոնք ետ քաշուելու կը ստիպեն. Բայց անոնք, իրենց վրայ նետուած ձեան գնդակներուն հարուածները բանի տեղ չդնելով, նորէն նորէն կը յարձակին մարտիոցին վրայ, և վերջապէս մարտիոցին պատերէն կ'անցնին, և ձիւնէ գնդակներ տեղալով միւսներուն վրայ զանոնք դուրս կը վռնան:

Յետոյ բոլոր տղայք դարձեալ մէկտեղ գալով մարտիոցը կը նորոգեն, և նոր յարձակման մը կը պատրաստուին հետեւեալ օրուան համար:

Այս խաղը շատ զուարճալի է, բայց վտանգաւոր է. ոչ թէ ձիւնէ գնդակներէն նիւթական վնաս մը կ'ըլլայ տղայոց, այլ սա վտանգը կայ որ տղայք կրնան իրարու գէժ զոյրանալ Ուրիշները նուաճելու խաղը կրնան այն տղայք միայն խաղալ որ նախ իրենք զիրենք նուաճել սորված են:

ԽՈՍԻ ՄԸ ԽՄ ՏՂՈՅՍ ՀԵՏ

Միրելի տղայք .

Անցեալ կիրակի եկեղեցի երթալով ինձի մտա դիմացս նստող քանի մը տղոց վրայ շատ ցաւեցայ. Ասոնք ի սկզբան քիչ մը ատեն հանդարտ նրստան, բայց յետոյ, երբ քարոզիչը սկսաւ ազօթք ընել, շուտով ձանձրացան. մերթ ասդին կը դառնային և մերթ անդին, մերթ կ'ըլլէին և մերթ կը նստէին, և չորս գին կը նայէին. Յետոյ քարոզիչը քարոզը սկսելով հազիւ քանի խօսք բաւ, տղայք անկէ ալ

ՊՈՒՍՆ ՀԱՄԱՐ ՈՒՐԻՇ ԽԱՂ ՄԸ
Նա, այս պատկերին մէջ կը տեսնէք նոր խաղ մը, զոր տղայք երբեմն ձմեռը կ'խաղան. Գպրոցին բոլոր տղայքը մկտեղ կու գան դպրոցին դիմացը ձիւնէ մարտիոց մը շինելու. Մարտիոցը շինելն ետքը տղայք երկու կը բաժնուի, մէկ մասը մարտիոցին մէջ կը կենայ երբ թէ զայն պաշտպանե-

լու համար, միւս մասն ալ դուրսը կենալով իբրև թշնամի կը ջանայ մարտիոցն առնել. Նախ երկու կողմն ալ ձիւնէ շատ մը գնդակներ կը պատրաստեն, և գնդակները կը շինեն որչափ կարելի է կարծր, բայց ձիւնէ միայն. ձիւնին մէջ քար չեն դներ. Գրնդակները պատրաստուելէն ետքը պաշարուածը կը սկսի. Այս պատկե-

ն: Անոնց մէկը երգար-
նաբանի մը շինեց, մէկ
ուրիշը սարսիկ գործերով զուգ աշտա-
րակիր: Տղոց ծիծաղելու ձայնէն բոլոր
բազմութիւնը ետին դարձաւ ակունե-
լու: Թէ ինչ էր: Այս միջոցին քարո-
ղիչը կը պատմէր Քրիստոսի սէրը, որ
այնպէս մեծ է մինչև հոգալ փոքրիկ
տղայք անգամ: Եթէ հարցունէի այս
տղոց թէ ինչ բաներու վրայ խօսե-
ցաւ քարողիչը, անոնք կարող պիտի
չըլլային քարողին մէկ խօսքն անգամ
ըսել: Բայց և այնպէս այս տղայք կ'ու-
զեն սիրել զԱստուած և անոր ծա-
ռայել, կամ թերևս կը կարծեն թէ կը
սիրեն զԱստուած և կը ծառայեն անոր:

Չեմ ուզեր որ, սիրելի տղայք, դուք
աղօթքի կամ քարոզի ատեն այսպէս
անհոգ ըլլաք: Յիշեալ տղայք պատիւ
շեն Քրիստոսի, թէպէտ Քրիստոսնայ
կը կոչուին: Տղայք աղօթարան կ'եր-
թան ոչ թէ խաղալու, այլ զԱստուած
պաշտելու, և այնպիսի բաներ լսելու
որ անոնց աստուածապաշտ ըլլալու
կ'օգնեն:

Բայց ուրիշ պատճառ մ'ալ կայ ո-
րուն համար տղայք հանդարտ և լուռ
նստելու և մտիկ ընելու են պաշտօ-
նի ատեն այսինքն քարոզչին օգնե-
լու համար: Փոքրիկ Յովհաննէան ան-
գամ որ դեռ եօթը տարեկան է՝ կըր-
նայ օգնել քարոզչին, եթէ կ'ուզէ:
Բանալի կը թուի ձեզ ասիկա: Ան-
ր մը քարոզիչ մը ըսաւ. Փոքրիկ
տղայի մը քարոզի ատեն շատ օգնեց
ինձի շիտակ իմ երեսնայելով և ա-
մէն մէկ խօսքիս միտ գնելով, որպէս
թէ իրեն միայն կը խօսէի:

Գուք, տղայք, որ պաշտօնի ատեն
ձանձրանալով կը խաղաք, գիտցէք որ
քարոզիչը կը խօսի Քրիստոսի, և կը խօսի
Աստուծոյ հետ: Եւ ինչպէս ինչպէս ինչպէս:

Այս բանին վրայ մտածեցէք, սիրե-
լի տղայք, որ ուրիշ անգամ ձեր խա-
ղալը չտեսնեմ աղօթքի կամ քարոզի
ատեն:

ՉԵՐ ՔՔՐԵԿԱՄԸ
ԿԱՐՈՒՍՍ

ԳՐԻԳՈՐԻՆ ԿԱՌԻԸ

Արիստղում կը խաղայ: Չի եղած է
և կը քաշէ կառք մը որուն մէջ նըս-
տած է իր փոքրիկ եղբայրը Գրիգոր:
Կառքը շատ զեղեցիկ չէ. փայտէ
անտուկ մըն է որուն Արիստղում քանի
մը անիւ դրած է, և այս անիւներն



ինք շինեց տախտակէ մը զոր ծովին
եզերքը գտաւ: Բայց այս երկու եղ-
բարք շատ դո՛հ են:

Մենէ դուքս եղած բաները չեն որ
մեզ դո՛հ և երջանիկ կ'ընեն, մեր
կուրծքին մէջ եղած սիրան է որմէ
կախում ունի մեր ուրախութիւնը:
Բերայի մէջ կան խանութներ որոնց
մէջ տղոց համար 200, 300, մինչև
500 և աւելի գահեկանի խաղալիկ-
ներ կան: Բայց այսպիսի մեծագին
խաղալիկներ ունեցող տղայք այնչափ
երջանիկ չեն որչափ են Արիստղում և
Գրիգոր, քանզի Աստուած անոնց
ատուած է դո՛հութեան քաղցր ոգին
որ - ԳՐԻԳՈՐՍ՝ աղէկ կ'ընէ անոնց:

Խնդրենք մեր երկնաւոր Հօրմէն
մեզի տալ այն ոգին որ Անոր ամե-
նէն պատուական օրհնութիւններուն
մէկն է:

Աւետարանի համար

ՊՁՏԻԿ ՄԵՂՔԵՐ

Սիրելի տղայք, երկաթուղին տե-
սած էք: Շողեկառքն անոր վրայ ինչ-
պէս արագ կ'երթայ: Կ'ուզէք ան-
գամ մը անոր մէջ մտնելով վաղել:
Երկաթուղեաւ ճամբորդութիւն ը-
նողները շատ հանգիստ կ'երթան,
բայց երբեմն կառքերը երկաթէն
դուրս ելլելով կ'իյնան և կտոր կտոր
կ'ըլլան: Այս ճամբորդութիւնն այլ-
ևայլ պատճառներէ կրնայ յառաջ
գալ, զորօրինակ երբ երկաթին վրայ
քար կամ ուրիշ բան մը կը գտնուի:
Բայց երբ երկաթին վրայ գտնուած
բանը շատ մեծ է, այնչափ վտանգա-
ւոր չըլլար, քանզի շողեկառք մեքե-
նան վարող անձը որ ճամբան գիտե-
լով կ'երթայ այն մեծ խոշը հեռու-
էն կրնայ տեսնել, և կամայ կամաց
կառքերը կեցնել, ուր եթէ խոշը
փոքրիկ բան մըն է, հեռուէն չի
տեսնուիր, և այնպէս աւելի վտան-
գաւոր է քան մեծամեծ խոշերը:

Ուստի, տղայք, մեզքերը կրնանք

քանի մը նկատմամբ երկաթուղին
վրայ գտնուած խոշերու նմանցներ:
Մեզքեր կան որ մեզի փոքր կ'երե-
ւին, և անոնց բնաւ միտ չդնող ան-
հոգ մարդոց թերևս ամենեկն չեն
երեւիր. բայց ամենէն վտանգաւոր
մեզքերն ասոնք են: Մեծ երեցող
մեզքերէ կը փախչինք, բայց շիտա-
րակիք, մեզքը միշտ մեզք է, փոքր մեզք
չկայ, ամէն մեզք դժոխք կը տանի:
Միթէ գաղտ սուտ կը խօսինք, ըսե-
լով թէ գող չենք, մարդասպան
չենք, Չգուշանանք, եթէ այս բանէն
չենք փախչիր, մեր դացած ճամբուն
վրայ կը գտնուի բան մը որ մեզի
անտարակոյս դժբախտութեան պատ-
ճառ կ'ըլլայ:

« ԻՍՐԱԵԼ ԹՈՂ ՏՈՒՐ »

Այս ամսուան Աւետարանի մէջ գըր-
ուած այս երգն Անգղիերէն երգի մը
թարգմանութիւնն է, զոր Ամերի-
կայի մէջ սե զերինները կ'երգէին, երբ
անոնք, Եգիպտոսի Իսրայելացւոց պէս,
գերութեան մէջ կը հեծէին:

ԱՇԽԱՏԱՍԻՐ ՏՂԱՅ ՄԸ

Իբր երեսուն և հինգ տարի առաջ
նիւ Եօրքի մէջ տղայ մը շատ կը ժա-
փաբէր գպրոց երթալ բժշկութիւն
սորվելու համար: Տունը ստացած էր
ինչ որ կրնար, և աւելի բան սորվե-
լու համար շատ աւելի ստակ ծախք
ընելու էր, կերակրոյ, հանդերձի և
գպրոցի վարձուց համար: Տղան պա-
րապ ժամանակ չվտանեց երթալով
ասոր անոր աղաչելու որ իրեն օգնեն,
կամ ջանալով վարժապետները հա-
մուզել որ ձրի ընդունին զանի գպրոց-
այլ գպրոց մը մտաւ, բայց դասի ժա-
մերէն դուրս այլեւայլ աշխատու-
թիւններ կ'ընէր: զորօրինակ յանձ-
նարարութիւններ կը կատարէր, սեն-
եակներ կ'աւելր, փայտ կը կտարէր,
կրակ կը պատարաստէր և ուրիշ ամէն
տեսակ ծառայութիւն կ'ընէր իրեն
և իր գպրոցի ծախուց համար պէտք
եղած ստակը ձեռք բերելու: Երբ
ուրիշ գործ չէր կրնար գտնել, լրա-
գիր կը ծախէր փողոցներու մէջ. լրա-
գիր ծախելով ստակ վաստկին ալ
շատ դժուարին էր այն քաղքին մէջ,
քանզի ծախողները շատ էին, և աղէկ
վաստկիլ անոնք միայն կրնային, որ
շատ վաղելու և յոգնելու կրնային
գիմանալ: Չխարդ և իցէ այս տղա
մեծ ջանքով և խնայութեամբ ստակ
շահելով ըրաւ իր բոլոր ծախքերը, և
աղէկ բժշկութիւն սորվելով իբր Չե
տարի է որ Ամերիկայի Պորտ ընկե-
րութեան միսիոնար է: Այս լրայ իբր
կարդացողներէն ոմանք տեսած են
այս անձը, որ հիմա Փոքր Ասիոյ կող-
մերը ճամբորդութիւն ընող սոքոր
կիւլիքն է: